

Հաստատված է՝
ՀՀ առողջապահության նախարարի
2005թ. հունիսի 18 -ի
թիվ 9574 հրամանով



Գրանցված է՝
ՀՀ իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի Սպանդարյանի տարածքային բաժնի
կողմից
" 20 " 11 2002թ.

Գրանցման թիվ 286.210.04738

Վկայական 03Ա 056541

Թիվ 001/3 փոփոխությունը

Գրանցված է իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի Կենտրոնի տարածքային բաժնի կողմից
" 25 " 10 2005թ.

Կենտրոնի տարածքային

բաժնի պետ Ա. Թորոսյան



ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՁԻԱՅ-ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (փոփոխություն)

«ՁԻԱՅ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) կանոնադրության 1.10 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Երևան, Աճառյան 2»:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «ՁԻԱՅ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության (գրանցված՝ 20.11.2002թ., թիվ 286.210.04738) անբաժանելի մասը:

Գրանցված է՝

ՀՀ արդարադատության նախարարության
իրավաբանական անձանց պետական ռեգիստրի

Սպանդարյանի տարածքային բաժնի կողմից

Գրանցման թիվ 286.210.04738

" 20 " 11 2002թ.

Վկայական 03Ն 056541

Բաժնի պետ Ա.Թորոսյան



Հաստատված է՝

ՀՀ առողջապահության նախարարի
2002թ. Ապրիլ 11 " 07 " -ի

թիվ 721 հրամանով



ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԶԻԱՅ-ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

I. Ընդհանուր դրույթներ

1. «ՁԻԱՅ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն է, որն իրականացնում է ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելում, բուժում ու բնակչության բժշկական օգնության և սպասարկման կազմակերպում:

«ՁԻԱՅ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 11-ի N 1091-Ն որոշմամբ՝ «ՁԻԱՅ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» պետական հիմնարկի վերակազմակերպման միջոցով:

2. Կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

3. Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության:

4. Կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդես գալ միայն հիմնադրի որոշմամբ:

5. Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում հիմնադրի պարտավորությունների համար:

6. Հիմնադիրը պատասխանատվություն է կրում մինչև կազմակերպության պետական գրանցումը ծագած կազմակերպության ստեղծման հետ կապված պարտավորությունների համար:

7. Կազմակերպությունը պետք է ունենա Հայաստանի Հանրապետության պետական գինանշանի պատկերով և իր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն անվանմամբ կլոր կնիք: Կազմակերպությունը կարող է ունենալ դրոշմակնիք, իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

8. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, բանկային հաշիվ:

9. Կազմակերպության անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «ՁԻԱՅ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն»
պետական ոչ առևտրային կազմակերպություն,

հայերեն կրճատ՝ ՁԻԱՅ-ի ԿՀԿ ՊՈԱԿ,

ռուսերեն լրիվ` Государственная некоммерческая организация
“Республиканский центр по профилактике СПИДа”,
ռուսերեն կրճատ` ГНО “РЦП СПИДа”,
անգլերեն լրիվ` “National Center for AIDS Prevention” State Non-commercial
Organization,
անգլերեն կրճատ` “National AIDS Center” SNO:
10. Կազմակերպության գտնվելու վայրն է` Երևան, Պուշկինի 56 ա:

II. Կազմակերպության գործունեության առարկան, նպատակները և խնդիրները

11. Կազմակերպության գործունեության նպատակն ու առարկան Հայաստանի Հանրապետության տարածքում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման աշխատանքների իրականացումն ու համակարգումն է:

12. Կազմակերպության հիմնական խնդիրներն են`

ա) ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և ՁԻԱՀ-ին զուգորդող հիվանդությունների համաճարակաբանական հետազոտությունների (հսկման) իրականացումը և դրանց զարգացման միտումների հետազոտումն ու վերլուծությունը.

բ) բնակչության տարբեր խմբերի (դեռահասների, երիտասարդների և այլն) բարոյական և սեռական դաստիարակությունը, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ու ՁԻԱՀ-ին զուգորդող հիվանդությունների կանխարգելման վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը և կրթումը.

գ) ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի տարածվածության մասին Հայաստանի Հանրապետության միջազգային համաձայնագրերով սահմանված կարգով տեղեկատվության փոխանակումը, իր կողմից կնքված պայմանագրերի ու համաձայնագրերի հիման վրա հանրապետության և օտարերկրյա իրավաբանական ու ֆիզիկական անձանց հետ կապերի հաստատումը, տարաբնույթ աշխատանքների կատարումը (կադրերի պատրաստում, գիտական, լուսավորչական և այլ գործունեություն).

դ) ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ու բուժման աշխատանքների իրականացումը և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ու բուժման բնագավառում առողջապահական կազմակերպությունների և մարմինների գործունեության համակարգումը.

ե) Հայաստանի Հանրապետության տարածքում, օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորված` ՄԻԱՎ վարակի և ՁԻԱՀ-ի հայտնաբերմանն ուղղված լաբորատոր հետազոտություններ կատարող առողջապահական կազմակերպություն-

ների (անկախ սեփականության ձևից) գործունեության որակի նկատմամբ հսկողության գործընթացին մասնակցությունը.

զ) ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման և ախտորոշման բնագավառի կադրերի պատրաստումը.

է) ՄԻԱՎ վարակի, ՁԻԱՅ-ի հետազոտման նոր լաբորատոր մեթոդների մշակումը, ինչպես նաև ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի և ՁԻԱՅ-ին զուգորդող հիվանդությունների վերաբերյալ գիտական և գործնական հետազոտությունների կատարումը:

ը) ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի և ՁԻԱՅ-ին զուգորդող հիվանդությունների կանխարգելմանը, ՄԻԱՎ վարակիրների և ՁԻԱՅ-ով հիվանդների ախտորոշմանը, բուժմանը ու սոցիալական պաշտպանվածությանն ուղղված ազգային մարտավարական և ռազմավարական ծրագրերի մշակումը և միջոցառումների իրագործումը.

թ) ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի և ՁԻԱՅ-ին զուգորդող հիվանդությունների խնդիրներին նվիրված ազգային և միջազգային համագումարների, համաժողովների, կոնֆերանսների, սեմինարների, վարժանքների, խորհրդակցությունների կազմակերպումը և մասնակցությունը այդ աշխատանքներին.

ժ) սույն կանոնադրության 14 հոդվածում նշված գործունեության տեսակներին առընչվող այլ խնդիրներ:

13. Կազմակերպությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության տարածքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների ու քաղաքացիություն չունեցող անձանց ՄԻԱՎ վարակի վերջնական (հաստատող/ժխտող) ախտորոշումը և ՄԻԱՎ վարակակրության կարգավիճակի վերաբերյալ վերջնական եզրակացության տրամադրումը:

14. Կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները`

ա) տեղեկատվական նյութերի ձեռքբերում, մշակում և հրատարակում.

բ) բնակչության տարբեր խմբերի սեռական դաստիարակություն, անվտանգ սեռական վարքագծի ձևավորում և իրազեկության բարձրացում.

գ) ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի նկատմամբ համաճարակաբանական հետազոտությունների կազմակերպում և իրականացում.

դ) Հայաստանի Հանրապետության տարածքում ՄԻԱՎ վարակի վերջնական լաբորատոր, ՁԻԱՅ-ի կլինիկական և լաբորատոր ախտորոշում.

ե) ՄԻԱՎ վարակակիրների և ՁԻԱՅ-ով հիվանդների դիսպանսերիզացիայի և ամբուլատոր բուժման կազմակերպում.

զ) բնակչության բժշկական օգնության և սպասարկման կազմակերպում.

է) գրանտային և արտաքին ֆինանսավորմամբ այլ ծրագրերի իրականացում:

15. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով կազմակերպությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:

III. Կազմակերպության գույքը և ֆինանսական գործունեությունը

16. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով հանձնվող, ինչպես նաև կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված ու ձեռք բերված գույքից:

17. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և սույն կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

18. Կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ, բացառությամբ կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

19. Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է կազմակերպությունը:

20. Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

21. Հիմնադիրը կարող է կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

22. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից կազմակերպությանն ամրացված գույքը:

23. Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:

Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնել վարձակալության: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը մեկ տարուց ավելի չի կարող սահմանվել, բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

Ամրացված գույքի օգտագործման արդյունքում կազմակերպության ստացած եկամուտները կազմակերպության սեփականությունն են:

Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

24. Հիմնադրի կողմից գույքը կազմակերպությանն անրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

25. Հիմնադրի կողմից կազմակերպությանը անրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

26. Կազմակերպությունն իր գործունեության նպատակին համապատասխան կարող է իրականացնել վճարովի ծառայություններ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

27. Կազմակերպության գործունեությունը ֆինանսավորվում է հետևյալ աղբյուրներից՝

ա) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից,

բ) վճարովի ծառայությունների հասույթից,

գ) Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների իրավաբանական ու ֆիզիկական անձանց նվիրատվություններից, բարեգործական, հովանավորչական, նպատակային և կտակված միջոցներից,

դ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

28. Պետական բյուջեով կազմակերպության համար ուղղակիորեն նախատեսված միջոցների սահմաններում կազմակերպության կողմից պետությանը մատուցվող ծառայությունների աշխատանքների և ապրանքների գնումն իրականացվում է մեկ աղբյուրից գնումների կատարման ձևով: Կազմակերպության կողմից պետությանն այլ ծառայություններ, աշխատանքներ կարող են մատուցվել կամ ապրանքներ իրացվել միայն “Գնումների մասին” օրենքով նախատեսված կարգով:

29. Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է միայն սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

30. Կազմակերպությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:

IV. Կազմակերպության հիմնարկները, ներկայացուցչությունները և մասնաճյուղերը

31. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի և սույն կանոնադրությանը համապատասխան կազմակերպությունը կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ: Կազմակերպության հիմնարկները, մասնաճյուղերը կամ ներկայացուցչությունները ստեղծվում են հիմնադրի, իսկ հիմնադրի կողմից ուղղակի նախատեսված դեպքում՝ լիազորված պետական մարմնի որոշմամբ:

32. Կազմակերպության կողմից օտարերկրյա պետություններում մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծումն իրականացվում է տվյալ երկրի օրենսդրությանը համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

33. Հայաստանի Հանրապետությունում կազմակերպության հիմնարկները, մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները, օրենքով սահմանված կարգով, ենթակա են հաշվառման՝ իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից:

V. Կազմակերպության կառավարումը

34. Կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա կողմից լիազորված պետական մարմինը, գործադիր մարմինը:

35. Հիմնադիրն ունի կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

36. Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

ա) կազմակերպության հիմնադրումը.

բ) կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների՝ այդ թվում նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

գ) կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և ամրացվող պետությանը պատկանող գույքի կազմի հաստատումը.

դ) կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

ե) կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը.

զ) կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը.

է) կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

ը) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

37. Հիմնադրի որոշմամբ սույն կանոնադրության 36 հոդվածի «գ», «դ», «ե» և «է» ենթակետերով նախատեսված իր լիազորությունները հիմնադիրը վերապահել է լիազորված պետական մարմնին՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը:

38. Լիազորված պետական մարմինն իրականացնում է կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

39. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը՝

ա) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է կազմակերպության կառավարման մարմնի ձևավորումը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

բ) իրականացնում է կազմակերպության գործունեության վերահսկողությունը.

գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող կազմակերպության գործադիր մարմնի հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

դ) լսում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները.

ե) վերահսկողություն է իրականացնում կազմակերպությանը ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.

զ) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս նրա գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

է) համաձայնություն է տալիս խոշոր գործարքների կատարման համար.

ը) հաստատում է կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

թ) իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

40. Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գործադիր մարմինը՝ տնօրենը, որին նշանակում և ազատում է (նրա լիազոր-

րությունները դադարում են) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարը:

Կազմակերպության տնօրենը օրենքով, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է կազմակերպության գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, հիմնադրի կամ լիազորված պետական մարմնի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

41. Կազմակերպության տնօրենի հետ կնքվում է պայմանագիր, որը հիմնադրի անունից ստորագրում է լիազորված պետական մարմնի ղեկավարը: Պայմանագրում սահմանվում են նրա իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները լիազորված պետական մարմնի, կազմակերպության կառավարման այլ մարմինների հետ, նրա աշխատանքի վարձատրման պայմանները, պայմանագրի դադարման օրենքով նախատեսված հիմքերը և այլ դրույթներ, որոնք պայմանավորվող կողմերը կգտնեն անհրաժեշտ: Պայմանագրի դրույթները չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության պահանջներին, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

42. Կազմակերպության տնօրենը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից և ներկայացնում է նրա շահերը և կնքում է գործարքներ.

բ) կազմակերպում է կազմակերպության և կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքները՝ ապահովելով դրանց ներդաշնակ գործունեությունը.

գ) օրենսդրությամբ, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

դ) պետական լիազորված մարմնի համաձայնությամբ կնքում է խոշոր գործարքներ.

ե) տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

զ) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

է) սահմանում է կազմակերպության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

ը) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում կազմակերպության աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

թ) կատարում է աշխատանքի բաշխում տեղակալների միջև.

ժ) հաստատում է կազմակերպության հիմնարկների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնադրությունները.

ժա) նշանակում է կազմակերպության հիմնարկների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ղեկավարներին, նրանց տալիս է համապատասխան լիազորագրեր.

ժբ) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

ժգ) իր բացակայության ժամանակ տնօրենի լիազորությունների իրականացումը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի համաձայնությամբ, դնում է տեղակալներից մեկի վրա.

ժդ) իրականացնում է օրենսդրությամբ չհակասող և կազմակերպության կառավարման այլ մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

43. Տնօրենի տեղակալներն իրականացնում են կազմակերպության գործունեության որոշակի ոլորտի անմիջական ղեկավարությունը՝ տնօրենի հանձնարարություններին, հրամաններին և կարգադրություններին համապատասխան:

44. Կազմակերպության տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով կազմակերպությանը և (կամ) պետությանը պատճառված վնասի համար:

45. Կազմակերպության լիազորված պետական մարմնի ղեկավարը, կազմակերպության գործադիր մարմինը, նրա տեղակալները, կազմակերպության անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իրենց կողմից ներկայացվող կազմակերպության:

VI. Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը

46. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ, օրենքով սահմանված կարգով: Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել հարյուր տոկոս պետական մասնակցությամբ ընկերության կամ հիմնադրամի:

47. Կազմակերպությունը դատական կարգով կարող է վերակազմակերպվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

48. Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

49. Կազմակերպությունը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ, օրենքով սահմանված կարգով:

Կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով:

50. Կազմակերպությունը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

51. Կազմակերպության լուծարման դեպքում կազմակերպության պարտատերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է պետական բյուջե: